ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

«17» դեկտեմբեր 2018թ. No 3245 – Ա

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՈՒՄ ՍՏԱՑԱԾ ԴԵՂԵՐԻ ՀԱՎԱՍՏԱԳՐԻ ՎԵՐԱՁԵՎԱԿԵՐՊՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն «Դեղերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 25-ի N 347 որոշման 17-րդ կետի, Վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կանոնադրությունը հաստատելու մասին» N 728-Լ որոշումը և հիմք ընդունելով «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի N 0101176118 առ 29.11.2018թ. գրությունը.

№ 11881
17 DEC 2018 ժամ 13-00

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել կից թվով 2 դեղի հավաստագրի վերաձևակերպումը՝ համաձայն հավելվածի:

2. «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրենի ժ/պ Լ. Մելիքյանին՝

1) հնգօրյա ժամկետում ապահովել դեղերի վերաձևակերպված գրանցման հավաստագրերի ներկայացումը ՀՀ առողջապահության նախարարություն.

2) սահմանված ժամկետում ապահովել սույն հրամանի 1-ին կետում նշված դեղերի վերաձևակերպված գրանցման հավաստագրերի տրամադրումը հայտատուներին՝ որպես վերաձևակերպված հավաստագրի ուժի մեջ մտնելու ժամկետ նշել սույն հրամանի տրման օրը.

3) մինչև յուրաքանչյուր ամսվա 5-ը ՀՀ դեղերի պետական գրանցամատյանում (ռեեստրում) ներառելու նպատակով ՀՀ առողջապահության նախարարություն ներկայացնել նախորդ ամսվա ընթացքում պետական գրանցում ստացած դեղերի ցանկը:

17.12.18

3. Ուժը կորցրած ճանաչել առողջապահության նախարարի 2018 թվականի դեկտեմբերի 10-ի թիվ 3183-Ա հրամանը:

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ԱՐՍԵՆ ԹՈՐՈՍՅԱՆ

14.12.2018

X

VERIFIED OCSP 14.12.2018 18:47:15 GMT+4

Signed by: TOROSYAN ARSEN 3114820360

ՀԱՎԵԼՎԱԾ

ՀՀ առողջապահության նախարարի

2018 թվականի դեկտեմբերի 17-ի հրամանի N 3245 - Ա

## ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՎԱՍՏԱԳՐԵՐԻ ՎԵՐԱՁԵՎԱԿԵՐՊՈՒՄ

| հ/հ | Առևտրային անվանումը | միջազգային չպատենտավորված (ջեներիկ) կամ ակտիվ բաղադրատարրերի անվանումները | դեղաձևը | դեղաչափը և թողարկման ձևը (փաթեթավորումը) | արտադրող ֆիրման | երկիրը | գրանցման հավաստագրի իրավատեր | Բաց թողման կարգը | եզրակացության համարը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1. | Կետոգել | կետոպրոֆեն | դոնդող արտաքին կիրառման | 2,5մգ/գ; 30գ ալյումինե պարկում, 40գ ալյումինե պարկում, 50գ ալյումինե պարկում | Վետպրոմ ԱԴ, Օտեզ Պայսիժ փ. 26, Ռադոմիր 2400 | Բուլղարիա | Դանսոն-ԲԳ, Օտեզ Պայսիժ փ. 26, Ռադոմիր 2400, Բուլղարիա | Դ | 17358 |
| 2. | Սոլիան | ամիսուլպրիդ | դեղահատեր բաժանելի | 200մգ; (30/3x10/) բլիստերում | Դելֆարմ Դիժոն, 6, Բուլվար դե լ՝ Յուրոպ 21800, Քետինյի | Ֆրանսիա | Սանոֆի-Ավենտիս Ֆրանս, 82 ավենյու Ռասպաիլ, 94250 Ջենթիլի, Ֆրանսիա | Դ | 16178 |